ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՍԱԻ-ԳՀԾՁԲ-18/2» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման գնման ընթացակարգի ամփոփման նիստ

ք. Երևան 31 օգոստոսի 2018թ. Ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ Գ. Նազարյան
Գնահատող անդամներ (ԳԱ)՝ Գ. Մաթևոսյան, Հ. Պողոսյան
Բացող անդամներ (ԲԱ)՝ Ա. Չուխաջյան, Ա. Ստեփանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ղազարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում:
3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթի գնահատում:
4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2. ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում:

2.1 ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, սակայն այդ պատավորությունը չի գերազանցում Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված շեմը՝ մասնակցի ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթի գնահատում:

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին է ներկայացրել հավաստում, որ իր աշխատակիցը ընդգրկված է լիազորված մարմնի կողմից հրապարակվող գնումների որակավորված համակարգողների ցուցակում:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՍԱԻ-ԳՀԾՁԲ-18/2» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել **ընտրված** մասնակից:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել **պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը** և **ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները**:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

3.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ պայմանագիրը կնքվելու օրվան հաջորդող օրը հանձնաժողովը համարվում է լուծարված:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Նազարյան

Անդամներ՝ _____ Ա. Չուխաջյան

_____ Ա. Ստեփանյան

_____ Հ. Պողոսյան

_____ Գ. Մաթոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Հ. Ղազարյան